ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/30

ք.Երևան «08» մայիսի 2019 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գրանտշին» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Հարությունյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի **Շենգավիթ վարչական շրջանի վթարային պատշգամբների նորոգման աշխատանքները** (այսուհետ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի **նախագծին**, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի **ծավալաթերթ-նախահաշվին** համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո **և կատարման ժամկետը է սահմանվում՝ 2019 թ օգոստոսի 30-ը:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում **նախագծանախահաշվային** փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ **նախագծին և ծավալաթերթին** համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օր**: Եթե երաշխիքային

ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **20_ աշխատանքային** օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված

աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **2373000 (երկու միլիոն երեք հարյուր յոթանասուն հազար)** ՀՀ դրամ, որից **395500 (երեք հարյուր իննսունհինգ հազար հինգ հարյուր)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, , N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսնված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կապալառու**
Երևանի քաղաքապետարան	«Գրանտշին» ՍՊԸ
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1	ՀՀ Լոռու մարզ, Վահագնաձոր 1փ. 97տուն
Կենտրոնական գանձապետարան	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900022000039	Հ/Հ 1930065816000100
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 06953951
Է. Կիրակոսյան---------- Ստորագրություն Կ.Տ	Գ. Հարությունյան ---------- (ստորագրություն) Կ.Տ

Հավելված թիվ 1
<<08> մայիսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ **<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/30>>** *գնման պայմանագրի*

Ծավալաթերթ Նախահաշիվ

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի պատշգամբների վերանորոգում

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը /հազ. դր./
1	2	3	4		
	Գ.Նժդեհի փող. 9 շենք, բն. 8				
	Քանդման աշխատանքներ				
1	Ծածկի սալի կոռոզիայի ենթարկված բետոնե շերտի քանդում	մ3	0.9000	22.4630	20.2167
2	Ամրանների մաքրում ժանգից մետաղական խոզանակներով	մ2	7.8000	0.2810	2.1918
3	Խորշերի բացում պատերում 350x250x160h	հատ	3.0000	3.3530	10.0590
4	Աղբի հավաքում, բարձում ինքնաթափ և տեղափոխում 13կմ	տ	0.5000	3.3000	1.6500
	Նորոգման աշխատանքներ				0.0000
5	Պողպատե [16 հեծանների մոնտաժում	տ	0.0730	593.9130	43.3556
6	Պողպատե I16 երկտավրի մոնտաժում	տ	0.0210	626.4890	13.1563
7	Մետաղական անկյունակների տեղադրում 50x5մմ	տն	0.0050	576.4200	2.8821
8	Մետաղե շվելեռային հեծանների և տավրերի հակակոռոզիոն պատում	տ	0.0980	11.5000	1.1270
9	Մետաղական կոնստրուկցայի մոնտաժ	տն	0.0690	68.8780	4.7526
10	Պատշգամբի մետաղական ճաղաշարի մոնտաժ	տն	0.0920	32.0470	2.9483
11	Մետաղական քառակուսի խողովակ 16x2մմ	տն	0.0654	591.1890	38.6638
12	Մետաղական շերտապողպատ 30x3մմ	տն	0.0200	422.2780	8.4456
13	Մետաղական շերտապողպատ 40x3մմ	տն	0.0062	374.0180	2.3189
14	Ճկված պրոֆիլ 200x200x5մմ	տ	0.0670	594.6110	39.8389
15	Թերթ 100x100x6մմ	տ	0.0020	584.9590	1.1699
16	Փայտե բազրիք 60x40	գմ	5.3000	1.4500	7.6850

17	Միաձույլ պատշգամբի /ՊՍ-1/ բետոնե շերտի իրականացում B15 դասի	մ3	0.9000	49.0000	44.1000
18	Ամրան □12A500C	տ	0.1040	408.9580	42.5316
19	Ց/ա սվաղ ցանցով կողքերի և տակի հատվածում	մ2	7.8000	5.7700	45.0060
20	Կախովի պատշգամբի ներկում կողքերի և տակի հատվածում	մ2	7.8000	1.5820	12.3396
21	Մետաղե էլեմենտների ներկում հակակոռոզիոն ներկով	տ	0.1600	11.5000	1.8400
22	Ց/ավազե հարթաշերտ 30մմ հաստ երկաթանացմամբ	մ2	4.4000	1.0430	4.5892
23	Ավտոաշտարակի տեղադրում	ժամ	16.0000	6.0330	96.5280
	Բագրատունյաց փող.13,շենք, բն.94				0.0000
	Քանդման աշխատանքներ				0.0000
1	Ծածկի սալի կոռոզիայի ենթարկված բետոնե շերտի քանդում	մ3	0.4700	14.1480	6.6496
2	Ամրանների մաքրում ժանգից մետաղական խոզանակներով	մ2	3.0000	0.4620	1.3860
3	Խորշերի բացում պատերում 350x250x160h	հատ	3.0000	1.9060	5.7180
4	Աղբի հավաքում, բարձում ինքնաթափ և տեղափոխում 13կմ	տ	0.5000	1.1560	0.5780
	Նորոգման աշխատանքներ				0.0000
5	Պողպատե [16 հեծանների մոնտաժում	տ	0.0710	558.3790	39.6449
6	Պողպատե I16 երկտավրի մոնտաժում	տ	0.0210	590.9550	12.4101
7	Մետաղական անկյունակների տեղադրում 50x5մմ	տն	0.0050	555.2310	2.7762
8	Մետաղե շվելեռային հեծանների և տավրերի հակակոռոզիոն պատում	տ	0.0970	13.2620	1.2864
9	Մետաղական կոնստրուկցայի մոնտաժ	տն	0.1000	33.2690	3.3269
10	Բետոնե շերտի իրականացում B15 դասի	մ3	0.4700	61.4890	28.8998
11	Ամրան □12A500C	տ	0.0554	408.9580	22.6563
12	Ց/ա սվաղ ցանցով կողքերի և տակի հատվածում	մ2	3.0000	6.5740	19.7220
13	Ց/ավազե հարթաշերտ 30մմ հաստ երկաթայնացմամբ	մ2	2.1600	1.5220	3.2875
14	Ավտոաշտարակի տեղադրում	ժամ	16.0000	6.0330	96.5280
	Բագրատունյաց փող.29,շենք, բն.7				0.0000

	Քանդման աշխատանքներ				0.0000
1	Ծածկի սալի կոռոզիայի ենթարկված բետոնե շերտի քանդում	մ3	0.4700	22.4630	10.5576
2	Ամրանների մաքրում ժանգից մետաղական խոզանակներով	մ2	3.0000	0.2810	0.8430
3	Խորշերի բացում պատերում 350x250x160h	հատ	3.0000	3.3530	10.0590
4	Աղբի հավաքում, բարձում ինքնաթափ և տեղափոխում 13կմ	տ	0.5000	3.3000	1.6500
	Նորոգման աշխատանքներ				0.0000
5	Պողպատե [16 հեծանների մոնտաժում	տ	0.0710	593.9500	42.1705
6	Պողպատե I16 երկտավրի մոնտաժում	տ	0.0210	626.5260	13.1570
7	Մետաղական անկյունակների տեղադրում 50x5մմ	տն	0.0050	576.4200	2.8821
8	Մետաղե շվելեռային հեծանների և տավրերի հակակոռոզիոն պատում	տ	0.0970	11.5000	1.1155
9	Մետաղական կոնստրուկցայի մոնտաժ	տն	0.1000	68.8400	6.8840
10	Բետոնե շերտի իրականացում B15 դասի	մ3	0.4700	59.0020	27.7309
11	Ամրան □12A500C	տ	0.0554	408.9580	22.6563
12	Տ/ա սվաղ ցանցով կողքերի և տակի հատվածում	մ2	2.6400	5.7700	15.2328
13	Տ/ավազե հարթաշերտ 30մմ հաստ երկաթայնացմամբ	մ2	1.8000	1.3590	2.4462
14	Ավտոաշտարակի տեղադրում	ժամ	16.0000	6.0330	96.5280
	Մայիսի 9 փող. 2 շենք բն.3				0.0000
	Քանդման և նորոգման աշխատանքներ				0.0000
1	Ծածկի սալի կոռոզիայի ենթարկված բետոնե շերտի քանդում	մ3	0.1600	22.4630	3.5941
2	Ամրանների մաքրում ժանգից մետաղական խոզանակներով	մ2	3.1100	0.2810	0.8739
3	Գոյություն ունեցող պատերի մեջ անցքերի շաղափում Φ 24, L=300մմ	հատ	10.0000	0.3540	3.5400
4	Խարսխային ամրանային ծողերի տեղադրում անցքերի մեջ Ի10C500C	տ	0.0022	521.2220	1.1467

5	Անցքերի ցեմենտացում պոլիմեր ցեմենտային շաղախով	հատ	10.0000	1.8900	18.9000
6	Ամրանային ցանցի տեղադրում Φ 5Вр-1 ք.150x150 մմ	տ	0.0063	744.9240	4.6930
7	Ծածկի սալի տորկրետացում 50մմ հաստությամբ մանրահատիկ բետոնով	մ2	3.1100	7.1950	22.3765
8	Բետոն մանրահատիկ В15	մ3	0.1600	36.5130	5.8421
9	Ց/ա սվաղ ցանցով կողքերի և տակի հատվածում	մ2	2.6000	3.7980	9.8748
10	Ց/ավազե հարթաշերտ 30մմ հաստ երկաթայնացմամբ	մ2	1.8000	1.3590	2.4462
11	Աղբի հավաքում, բարձում ինքնաթափ և տեղափոխում 13կմ	տ	0.5000	3.3000	1.6500
12	Ավտոաշտարակի տեղադրում	ժամ	16.0000	6.0333	96.5280
	Շիրակի փող 14 շենք բն 21				0.0000
	Քանդման և նորոգման աշխատանքներ				0.0000
1	Ծածկի սալի կոռոգիայի ենթարկված բետոնե շերտի քանդում	մ3	0.1300	22.4630	2.9202
2	Ամրանների մաքրում ժանգից մետաղական խոզանակներով	մ2	2.7500	0.2810	0.7728
3	Գոյություն ունեցող պատերի մեջ անցքերի շաղափում Φ 24, L=300մմ	հատ	10.0000	0.3540	3.5400
4	Խարսխային ամրանային ձողերի տեղադրում անցքերի մեջ Ի10Ը500С	տ	0.0022	521.2220	1.1467
5	Անցքերի ցեմենտացում պոլիմեր ցեմենտային շաղախով	հատ	10.0000	1.8900	18.9000
6	Ամրանային ցանցի տեղադրում Φ 5Вр-1 ք.150x150 մմ	տ	0.0056	744.9240	4.1716
7	Ծածկի սալի տորկրետացում 50մմ հաստությամբ մանրահատիկ բետոնով	մ2	2.7500	7.1950	19.7863
8	Բետոն մանրահատիկ В15	մ3	0.1300	36.5130	4.7467
9	Ց/ա սվաղ ցանցով կողքերի և տակի հատվածում	մ2	2.7500	3.7980	10.4445
10	Ց/ավազե հարթաշերտ 30մմ հաստ երկաթայնացմամբ	մ2	1.8900	1.3590	2.5685
11	Աղբի հավաքում, բարձում ինքնաթափ և տեղափոխում 13կմ	տ	0.5000	3.3000	1.6500
12	Ավտոաշտարակի տեղադրում	ժամ	16.0000	6.0330	96.5280

	Շիրակի փող. 2-րդ նրբ. 4 շենք. բն. 24				0.0000
	Քանդման և նորոգման աշխատանքներ				0.0000
1	Ծածկի սալի կոռոզիայի ենթարկված բետոնե շերտի քանդում	մ3	0.1600	22.4630	3.5941
2	Ամրանների մաքրում ժանգից մետաղական խոզանակներով	մ2	3.1900	0.2810	0.8964
3	Գոյություն ունեցող պատերի մեջ անցքերի շաղափում Φ 24, L=300մմ	հատ	10.0000	0.3540	3.5400
4	Խարսխային ամրանային ձողերի տեղադրում անցքերի մեջ Ի10Ը500Ը	տ	0.0022	521.2220	1.1467
5	Անցքերի ցեմենտացում պոլիմեր ցեմենտային շաղախով	հատ	10.0000	1.8900	18.9000
6	Ամրանային ցանցի տեղադրում Φ 5Вр-1 ք.150x150 մմ	տ	0.0063	744.9240	4.6930
7	Ծածկի սալի տորկրետացում 50մմ հաստությամբ մանրահատիկ բետոնով	մ2	3.1900	7.1950	22.9521
8	Բետոն մանրահատիկ В15	մ3	0.1600	36.5130	5.8421
9	Ց/ա սվաղ ցանցով կողքերի և տակի հատվածում	մ2	2.7000	3.7980	10.2546
10	Ց/ավազե հարթաշերտ 30մմ հաստ երկաթայնացմամբ	մ2	1.8200	1.3590	2.4734
11	Աղբի հավաքում, բարձում ինքնաթափ և տեղափոխում 13կմ	տ	0.5000	3.3000	1.6500
12	Ավտոաշտարակի տեղադրում	ժամ	16.0000	6.0330	96.5280
	Շիրակի փող. 16 շենք բն.6				0.0000
	Քանդման աշխատանքներ				0.0000
1	Ծածկի սալի կոռոզիայի ենթարկված բետոնե շերտի քանդում	մ3	0.3600	22.3940	8.0618
2	Ամրանների մաքրում ժանգից մետաղական խոզանակներով	մ2	2.2500	0.2800	0.6300
3	Խորշերի բացում պատերում 350x250x160h	հատ	3.0000	3.3430	10.0290
4	Աղբի հավաքում, բարձում ինքնաթափ և տեղափոխում 13կմ	տ	0.5000	3.2900	1.6450
	Նորոգման աշխատանքներ				0.0000
5	Պողպատե [16 հեծանների մոնտաժում	տ	0.0710	592.1370	42.0417

6	Պողպատե I16 երկտավրի մոնտաժում	տ	0.0210	624.6130	13.1169
7	Մետաղական անկյունակների տեղադրում 50x5մմ	տն	0.0050	574.6600	2.8733
8	Մետաղե շվելեռային հեծանների և տավրերի հակակոռոզիոն պատում	տ	0.0970	11.4650	1.1121
10	Բետոնե շերտի իրականացում B15 դասի	մ3	0.3600	58.8220	21.1759
11	Ամրան □12A500C	տ	0.0360	407.7090	14.6775
12	Ց/ա սվաղ ցանցով կողքերի և տակի հատվածում	մ2	2.2500	5.7520	12.9420
13	Ց/ավազե հարթաշերտ 30մմ հաստ երկաթայնացմամբ	մ2	1.5000	1.3550	2.0325
14	Ավտոաշտարակի տեղադրում	ժամ	16.0000	6.0140	96.2240
	Արտաշիսյան փող. 45/20 շենք, բն.23				0.0000
	Քանդման աշխատանքներ				0.0000
1	Ծածկի սալի կոռոզիայի ենթարկված բետոնե շերտի քանդում	մ3	0.5400	22.3770	12.0836
2	Ամրանների մաքրում ժանգից մետաղական խոզանակներով	մ2	5.1000	0.2800	1.4280
3	Խորշերի բացում պատերում 350x250x160h	հատ	4.0000	3.3400	13.3600
4	Աղբի հավաքում, բարձում ինքնաթափ և տեղափոխում 13կմ	տ	0.5000	3.2880	1.6440
	Նորոգման աշխատանքներ				0.0000
5	Պողպատե [16 հեծանների մոնտաժում	տ	0.1050	591.6830	62.1267
6	Պողպատե I16 երկտավրի մոնտաժում	տ	0.0173	624.1350	10.7975
7	Մետաղական անկյունակների տեղադրում 50x5մմ	տն	0.0060	574.2200	3.4453
8	Մետաղե շվելեռային հեծանների և տավրերի հակակոռոզիոն պատում	տ	0.1280	11.4560	1.4664
10	Բետոնե շերտի իրականացում B15 դասի	մ3	0.5400	58.7770	31.7396
11	Ամրան □12A500C	տ	0.0650	407.4060	26.4814
12	Ց/ա սվաղ ցանցով կողքերի և տակի հատվածում	մ2	5.1000	5.7480	29.3148
13	Ց/ավազե հարթաշերտ 30մմ հաստ երկաթայնացմամբ	մ2	2.7000	1.3340	3.6018

14	Ավտոաշտարակի տեղադրում	ժամ	16.0000	6.0100	96.1600
	Ընդամենը				1977.5000
	ԱԱՀ - 20 %				395.5000
	Ամբողջը				2373.0000

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900022000039
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան----------
Ստորագրություն
Կ.Տ

Կապալառու
«Գրանտշին» ՍՊԸ
ՀՀ Լոռու մարզ, Վահագնաձոր 1փ. 97տուն
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930065816000100
ՀՎՀՀ 06953951

Գ. Հարությունյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
<<08> մայիսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ **<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/30>>** *գնման պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի վթարային պատշգամբների նորոգման **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի վթարային պատշգամբների նորոգման աշխատանքներ	*Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը:*	30.08.2019թ
ԸՆԴԱՄԵՆԸ			

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900022000039
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան----------
Ստորագրություն*
Կ.Տ

Կապալառու
«Գրանտշին» ՍՊԸ
ՀՀ Լոռու մարզ, Վահագնաձոր 1փ. 97տուն
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930065816000100
ՀՎՀՀ 06953951

Գ. Հարությունյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 3
<<08> մայիսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/30>> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
	45261170		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
		Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի վթարային պատշգամբների նորոգման աշխատանքներ	---	---	---	---	1 461 000	1 461 000	2 373 000	2 373 000	2 373 000	2 373 000	2 373 000	2 373 000	2 373 000

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900022000039
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան----------
Ստորագրություն
Կ.Տ

Կապալառու
«Գրանտշին» ՍՊԸ
ՀՀ Լոռու մարզ, Վահագնաձոր 1փ. 97տուն
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930065816000100
ՀՎՀՀ 06953951

Գ. Հարությունյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 4
<<08> մայիսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ **<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/30>>** *գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2019 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2019 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2019 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
<<08> մայիսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ **<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/30>>** *գնման պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 2019 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ *ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/30*
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «08» մայիսի 2019 թ.**

«Գրանտշին» ՍՊԸ –ն ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Հարությունյանի նույնականացման քարտ 005930326 տրված է 006-ի կողմից 27.09.2017թ .որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է _____Երևանի քաղաքապետարանի_____* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ _*«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/30»*_____* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեֆորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև /25/05/2020__ ** (Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Կապալառու

«Գրանտշին» ՍՊԸ
ՀՀ Լոռու մարզ, Վահագնաձոր 1փ. 97տուն
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930065816000100
ՀՎՀՀ 06953951

Գ. Հարությունյան ----------
(ստորագրություն)

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅԱՆԱԳԻՐ

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ «Գրանտշին» ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 1930065816000100

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 06953951

8. Վճարողի ՀՎՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Երևանի քաղաքապետարան

10. Շահառուի ՀՎՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

12.Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900015211429

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 237300 /երկու հարյուր երեսունյոթ հազար երեք հարյուր/

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ *«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/30»*

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները Գ. Հարությունյան /_____/ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.S. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.S. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.